Կազմված է 23.06.2018թ. Հաստատված է «ՀԱՅՈՑ ԱՐԾԻՎՆԵՐ. ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ» կուսակցության հիմնադիր համագումարի որոշմամբ 23 հունիսի 2018թ. «ՀԱՅՈՑ ԱՐԾԻՎՆԵՐ. ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ» կուսակցության նախագահ Խաչիկ Մայիսի Ասլյան	Տպագրված է 3 (երեք) օրինակից Օրինակ 3 Գրանցված է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից «23» օգոստոսի 2018 թ. Գրանցման համար 211.122.1033678 ՀՎՀՀ 02275464 05

«ՀԱՅՈՑ ԱՐԾԻՎՆԵՐ. ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ»

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2018

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «Հայոց Արծիվներ. Միասնական Հայաստան» կուսակցությունն (այսուհետ՝ կուսակցություն) իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, Հայաստանի Հանրապետության օրենքների և իրավական ակտերի, Հայաստանի Հանրապետության հետ վավերացված միջազգային պայմանագրերի, սույն կանոնադրության, ինչպես նաև՝ կուսակցության ծրագրի հիման վրա, որի նպատակը հանրահավաքներին, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին մասնակցելու և հասարակության ու պետության քաղաքական կյանքին մասնակցության այլ ձևերով ժողովրդի քաղաքական կամքի ձևավորմանն ու արտահայտմանը նպաստելն է:

1.2. Կուսակցության գործունեության սկզբունքներն են՝ օրինականություն, անկախություն, ժողովրդավարություն, թափանցիկություն, նախաձեռնությունների ազատ դրսևորում, կամավորություն, իրավահավասարություն, ինքնակառավարում, կոլեգիալություն, հրապարակայնություն և հաշվետվողականություն:

1.3. Օրենքով սահմանված կարգով՝ պետական գրանցման պահից «Հայոց Արծիվներ. Միասնական Հայաստան» կուսակցությունը հանդիսանում է իրավաբանական անձ, օգտվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով ընձեռված բոլոր իրավունքներից և կրում, դրանցով սահմանված, պարտականությունները:

1.4. Կուսակցությունը ձգտում է, ՀՀ Սահմանադրության և օրենքների շրջանակներում, ժողովրդավարական ընտրությունների միջոցով ապահովել իր ներկայացվածությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում և այդ ճանապարհով մասնակցել Ազգային ժողովի, պետական իշխանության (օրենսդիր, գործադիր, դատական մարմիններ) և տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորմանը, պետական քաղաքականության մշակմանն ու իրականացմանը:

1.5. Կուսակցությունը գործում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում և օտարերկրյա պետություններում՝ այդ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

1.6. Կուսակցության անվանումն է՝

- հայերեն՝ «ՀԱՅՈՑ ԱՐԾԻՎՆԵՐ. ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ» կուսակցություն (հապավումը՝ ՀԱՄՀԿ).
- ռուսերեն՝ партия “АРМЯНСКИЕ ОРЛЫ. ЕДИНАЯ АРМЕНИЯ” (հապավումը՝ ПАОЕА).
- անգլերեն՝ “ARMENIAN EAGLES. UNITED ARMENIAN” party (հապավումը՝AEUAP):

1.7. Կուսակցությունը ունի գաղափարախոսություն, այն է՝ ազգային-պետական–հայրենասիրական, կարգախոս՝ «Աստվա՛ծ, Հա՛յ Ազգ, Հայաստա՛ն», դրոշ, գույն՝ ծիրանագույնը, խորհրդանշան, ձևաթուղթ, կլոր կնիք, բանկային հաշիվներ՝ Հայաստանի Հանրապետության դրամով, արժույթով:

1.8. Կուսակցության դրոշը, լայնության և երկարության չափերի՝ 1,2:1,8 հարաբերությամբ, ծիրանագույն, ոսկեգույն ծոպքերով պաստառ է, որի

կենտրոնում պատկերված է Կուսակցության խորհրդանշանը՝ մինչև 0,8 տրամագծով՝ լայնության հարաբերությամբ:

1.9. Կուսակցության խորհրդանշանը՝ վերևից ներքև, հորիզոնական ուղղությամբ, կարմիր, կապույտ, ծիրանագույն եռաշերտ՝ կարմիրով երիզված շրջան է, որի կենտրոնում պատկերված է թևերը տարածած, սպիտակ գլխով և սպիտակ պարանոցով շագանակագույն արծիվ, արծվի գլխավերևից, հետևի մասով, մինչև ներքև՝ ուղղահայաց, խաչ-սուր է՝ արևի շողերով, արծվի ոտքերի տակ, ութ թերթիկներով՝ աջ պտույտով, հայկական ավանդական հավերժանշան՝ ալ կարմիր և սպիտակ գույներով, հավերժանշանի ձախ մասում՝ գիրք, աջ մասում՝ փետուրով գրիչ, խորհրդանշանի ներքևի ձախ մասից՝ շրջանով, ՀԱՅՈՑ ԱՐԾԻՎՆԵՐ. ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ գրությունը (հավելված 1.1):

1.10. Կուսակցության խորհրդանշանը պատկերվում է Կուսակցության կնիքի, դրոշների, ձևաթղթերի, կրծքանշանների, օրացույցների, ծալաթերթերի (բուկլետների), էլեկտրոնային լրատվամիջոցների, տպագիր մամուլի, տեսաֆիլմերի և անհատականացման մյուս միջոցների վրա:

1.11. Կուսակցության նախագահությունը (այսուհետ՝ նախագահություն) շնորհում է Կուսակցության բարձրագույն կոչում՝ ««ՀԱՅՈՑ ԱՐԾԻՎՆԵՐ. ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ» կուսակցության Պատվավոր Նախագահ»՝ կուսակցության նախագահի (այսուհետ՝ նախագահ) առաջարկությամբ:

1.12. Նախագահությունը շնորհում է ««ՀԱՅՈՑ ԱՐԾԻՎՆԵՐ. ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ» կուսակցության Պատվավոր անդամ» կոչում՝ նախագահի առաջարկությամբ:

1.13. Կուսակցության իրավաբանական հասցեն՝ ք. Երևան, Շենգավիթ վարչական շրջան, Վ. Շենգավիթ 2-րդ փողոց, 5 շենք, թիվ 30 բնակարան: Հեռախոս՝ (+37498) 81-11-11, (+37477) 81-11-11:

2. «ՀԱՅՈՑ ԱՐԾԻՎՆԵՐ. ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ԵՆ

2.1. Կուսակցության գործունեության խնդիրներն են՝

- աջակցել Հայաստանի Հանրապետության պետական սահմանների՝ հայոց սուրբ հողի պաշտպանությանը.
- նպաստել Հայաստանի Հանրապետության՝ որպես ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետության ամրապնդմանն ու զարգացմանը.
- նպաստել և աջակցել Հայ Առաքելական եկեղեցու կողմից իրականացվող օրինաբեր գործունեությանը, քրիստոնեության ամրապնդմանն ու տարածմանը.
- նպաստել Հայաստանի Հանրապետության քաղաքական համակարգի ամրապնդմանն ու զարգացմանը.
- մասնակցել Հայաստանի Հանրապետության իշխանությունների կազմավորման և կառավարման գործընթացին.
- նպաստել և աջակցել քաղաքացիական հասարակության ամրապնդմանն ու զարգացմանը.
- նպաստել և աջակցել Հայաստանի Հանրապետության տնտեսության բոլոր ոլորտների անընդհատ զարգացմանը.

- նպաստել և աջակցել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության զարգացմանը, ռազմարդյունաբերության անընդհատ հզորացմանը, սոցիալ-տնտեսական զարգացման համալիր ծրագրերի մշակմանն ու իրականացմանը.
- նպաստել և աջակցել հայոց ազգային բանակի ամրապնդմանն ու հզորացմանը, բանակ-հասարակություն կապի անընդհատ ամրապնդմանը, հայոց զինվորականի և հայ զինվորի մարտունակ ոգու պահպանմանն ու հզորացմանը, հայոց զինվորականի և հայ զինվորի սոցիալական վիճակի անընդհատ բարելավմանը, պատանիների, երիտասարդների և միջին տարիքի մարդկանց շրջանում հայրենասիրության և ռազմահայրենասիրության դաստիարակության ամրապնդմանը.
- նպաստել Հայաստանի Հանրապետությունում գործող հայրենասիրական կազմակերպությունների, երիտասարդական կազմակերպությունների, հայրենակցական միությունների, մարզական, բնապահպանական, գիտական, կրթական, մշակույթի, արվեստի, գրականության հիմնահարցերով զբաղվող, հաշմանդամների խնդիրներով զբաղվող կազմակերպությունների համախմբմանը՝ ի նպաստ հայոց պետության զարգացման, հզորացման, ազգային, հոգևոր կյանքի ամրապնդման.
- նպաստել և աջակցել մարդու, Հայաստանի Հանրապետության քաղաքացու իրավունքների պաշտպանությանը, պարտականությունների կատարմանը.
- նպաստել և աջակցել հասարակության շրջանում կանանց դերի բարձրացմանը, ավանդապաշտ հայ ընտանիքի պահպանմանն ու ամրապնդմանը.
- նպաստել և աջակցել պատանիների, երիտասարդների, միջին տարիքի և տարեց մարդկանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը, սոցիալական վիճակի բարելավմանը.
- ստեղծել պայմաններ փոքր և միջին բիզնեսի զարգացման համար՝ նպաստելով նոր աշխատատեղերի ստեղծմանը.
- նպաստել պատանիների, երիտասարդների ընդունակությունների բացահայտմանը, ունակությունների և մասնագիտական կարողությունների զարգացմանը՝ ստեղծելով մասնագիտական վերապատրաստման, կատարելագործման և ուսուցման կենտրոններ.
- նպաստել և աջակցել Հայաստանի Հանրապետության համայնքների ավագանիների դերի բարձրացմանն ու համայնքների ավագանիների գործունեության արդյունավետությանը.
- նպաստել հայ ժողովրդի պատմամշակութային արժեքների վերականգնմանը, պահպանմանն ու տարածմանը.
- անողոք պայքար մղել կոռուպցիայի ու կաշառակերության դեմ և արմատախիլ անել դրանք.
- նպաստել և աջակցել Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության միջև ռազմական, տնտեսական և այլ ոլորտներին վերաբերող համագործակցությանը.
- նպաստել և աջակցել աշխարհասփյուռ հայության հայրենադարձությանը մայր Հայրենիք.
- գործնական կապեր հաստատել Հայաստանի Հանրապետությունում, Արցախի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում գործող կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների, բարեգործական հիմնադրամների հետ՝ ակտիվ համագործակցելով համատեղ ծրագրերի իրականացման հարցերով.

- ցուցաբերել նյութական, բարոյական աջակցություն Հայաստանի Հանրապետությունում, Արցախի Հանրապետությունում և սփյուռքում բնակվող զոհված և հաշմանդամ դարձած ազատամարտիկների, փախստականների ընտանիքներին՝ նպաստելով նրանց սոցիալ-տնտեսական խնդիրների լուծմանը.
- նպաստել և աջակցել Հայաստան-Արցախ-Սփյուռք կապի ամրապնդմանը, կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների, բարեգործական հիմնադրամների համագործակցությանը՝ ուղղված համահայկական խնդիրների լուծմանը, տարբեր ծրագրերի և միջոցառումների կազմակերպմանն ու իրականացմանը.
- նպաստել և աջակցել Հայաստանի Հանրապետությունում բնակվող և Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող այլ ազգերի քաղաքացիների և նրանց կողմից հիմնադրված կազմակերպությունների հայաստանակենտրոն գործունեությանը.
- նպաստել և աջակցել քրիստոնյա հայ և ռուս ժողովուրդների՝ դաշնակից-բարեկամ պետությունների՝ Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության ազնիվ ու անփոխարինելի բարեկամության անընդհատ ամրապնդմանն ու հզորացմանը.
- նպաստել և աջակցել Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև պետական իշխանությունների (օրենսդիր, գործադիր, դատական մարմիններ) կողմից պաշտոնապես կնքված ռազմական, քաղաքական, տնտեսական և մյուս ոլորտներին վերաբերող բոլոր միջազգային պայմանագրերի կատարմանը, պահպանմանն ու նոր՝ առավել արդյունավետ պայմանագրերի կնքմանը.
- նպաստել և աջակցել Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև տնտեսության բոլոր ճյուղերին վերաբերող համատեղ ծրագրերի իրականացմանը,ինչպես նաև՝ նոր ծրագրերի ստեղծմանն ու իրագործմանը.
- նպաստել և աջակցել Հավաքական Անվտանգության Պետությունների Կազմակերպության (ՀԱՊԿ) արդյունավետ գործունեությանն ու հեղինակության բարձրացմանը.
- նպաստել և աջակցել Եվրասիական Տնտեսական Միության (ԵԱՏՄ) արդյունավետ գործունեությանն ու հեղինակության բարձրացմանը.
- նպաստել Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջև կնքված պետական բոլոր պայմանագրերի կատարմանը, պահպանմանն ու, որպես հարևան պետությունների, նոր՝ առավել արդյունավետ պայմանագրերի կնքմանը.
- նպաստել Հայաստանի Հանրապետության և Վրաստանի Հանրապետության միջև կնքված պետական բոլոր պայմանագրերի կատարմանը, պահպանմանն ու, որպես հարևան պետությունների, նոր՝ առավել արդյունավետ պայմանագրերի կնքմանը.
- ստեղծել կրթական, գիտական, մշակութային, մարզական, վերլուծական, սոցիոլոգիական, տեղեկատվական և այլ կենտրոններ, օրենքով սահմանված կարգով լրատվամիջոցներ՝ այդ թվում՝ հեռուստաընկերություններ, տպագիր մամուլ, էլեկտրոնային կայքեր, ինչպես նաև ապահովել առցանց ներկայություն և աջակցել վերոնշյալ բոլոր ոլորտների գործունեությանն ու հրապարակել, հանրայնացնել բոլոր խնդիրները, կատարված և կատարվող բոլոր աշխատանքները:

- ծավալել, սույն կանոնադրական նպատակներից բխող և օրենքով չարգելված, այլ գործունեություններ:

3. «ՀԱՅՈՑ ԱՐԾԻՎՆԵՐ. ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԸ (այսուհետ՝ կուսակցության անդամ)

3.1. Կուսակցության անդամ կարող է լինել, 18 տարին լրացած, Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր գործունակ քաղաքացի, ով ընդունում է կուսակցության ծրագիրն ու կանոնադրությունը, մասնակցում նրա գործունեությանը, կատարում կուսակցության որոշումները, մուծում անդամավճար և չի հանդիսանում մեկ այլ կուսակցության հիմնադիր:

3.2. Կուսակցությանն անդամագրվում են կամավոր հիմունքներով, անհատական կարգով, անձնական դիմումի համաձայն՝ այն համայնքի կամ վարչական շրջանի սկզբնական կազմակերպության կողմից, որտեղ բնակվում է դիմողը՝

- կուսակցության համայնքային կազմակերպության խորհրդի որոշմամբ,
- կուսակցության մարզային կազմակերպության խորհրդի որոշմամբ,
- կուսակցության վարչական շրջանի կազմակերպության խորհրդի որոշմամբ,
- կուսակցության Երևան քաղաքի կազմակերպության խորհրդի որոշմամբ,
- կուսակցության կազմակերպչական հանձնաժողովի որոշմամբ:

3.3. Կուսակցության համայնքային, մարզային, վարչական շրջանի, Երևան քաղաքի կազմակերպությունների կամ կուսակցության կազմակերպչական հանձնաժողովի բացակայության դեպքում՝ կուսակցության շարքերը ընդունվելու հարցը լուծում է կուսակցության Նախագահությունը: Անհրաժեշտության դեպքում՝ նախագահությունը կարող է իր կազմից ստեղծել հանձնաժողով, որն իրավասու է կազմակերպել Հայաստանի Հանրապետության բնակավայրերում կուսակցության շարքերն ընդունվելը:

3.4. Կուսակցության անդամը հաշվառվում է կուսակցության որևէ սկզբնական կազմակերպությունում:

3.5. Կուսակցության անդամը կամավոր մուծում է անդամավճար, բայց ոչ ավել, քան «Կուսակցությունների մասին» ՀՀ Սահմանադրական օրենքով սահմանված չափը:

3.6. Եթե, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով, կուսակցությանն անդամակցությունն անթույլատրելի է դառնում, այն կասեցվում է կուսակցության անդամի դիմումի հիման վրա՝ կուսակցության կազմակերպչական հանձնաժողովի, կամ կուսակցության նախագահության որոշմամբ: Կասեցումը հանվում է նույն կարգով:

3.7. Կուսակցության անդամն իրավունք ունի՝

- ընտրել և ընտրվել կուսակցության սկզբնական, համայնքային, մարզային, վարչական շրջանի, Երևան քաղաքի կազմակերպությունների, հանձնաժողովների, վերահսկողություն իրականացնող, ինչպես նաև՝ ներկայացուցչական և ղեկավար մարմիններում (համագումար, նախագահություն).
- ներկա լինել կուսակցության համագումարի նիստերին.
- կուսակցության ղեկավար մարմինների քննարկմանը ներկայացնել հասարակական, քաղաքական կյանքի տարբեր ոլորտներին վերաբերող նախաձեռնություններ և առաջարկություններ.
- տեղեկատվություն ստանալ կուսակցության ու նրա ղեկավար մարմինների գործունեության վերաբերյալ.

- ծանոթանալ կուսակցության մարմինների արձանագրություններին և ստանալ նրանց ընդունած որոշումների պատճենները.
- ստանալ փաստաթղթերի պատճեններ՝ կուսակցության կանոնադրության փոփոխությունների, գույքի կառավարումից ստացած դրամական միջոցների վերաբերյալ, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացրած անկախ աուդիտի եզրակացությունը.
- դուրս գալ կուսակցության շարքերից՝ իր դիմումի համաձայն.
- բողոքարկել կուսակցության սկզբնական, համայնքային, մարզային, վարչական շրջանի, Երևան քաղաքի կազմակերպությունների ղեկավար մարմինների որոշումներն ու գործողությունները կուսակցության ղեկավար մարմիններում.
- մասնակցել այն նիստին, որտեղ քննարկվում է նրա անձնական հարցը կամ առաջարկությունը, արտահայտել իր կարծիքը քննարկվող հարցի կամ հարցերի վերաբերյալ.
- կասեցնել և (կամ) վերականգնել իր անդամակցությունը կուսակցությանը՝ նախագահի որոշմամբ.
- օգտվել, Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված, այլ իրավունքներից:

3.8. Կուսակցության անդամը պարտավոր է՝
- կատարել կուսակցության համագումարի, կուսակցության ղեկավար մարմինների որոշումները և ծրագրային դրույթները.
- գործել կուսակցության կանոնադրության շրջանակներում.
- մասնակցել սկզբնական, համայնքային, մարզային, վարչական շրջանի, Երևան քաղաքի կազմակերպությունների, կուսակցության հանձնաժողովների նիստերին և միջոցառումներին.
- կատարել Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված այլ պարտականություններ:

3.9. Կուսակցությանն անդամակցությունը դադարում է՝
- իր դիմումի համաձայն՝ կուսակցությունից դուրս գալու դեպքում.
- կուսակցությունից հեռացվելու դեպքում.
- իր մահվան դեպքում.
- կուսակցության լուծարման դեպքում:

3.10. Կուսակցության կանոնադրությամբ նախատեսված պարտականությունները կամ ղեկավար մարմինների որոշումները չկատարելու դեպքում՝ կուսակցականը կարող է ենթարկվել կարգապահական պատասխանատվության՝
- նկատողություն,
- խիստ նկատողություն,
- կուսակցությունից հեռացում:
- Կուսակցության շարքերից հեռացվածն իրավունք ունի մեկամսյա ժամկետում տվյալ որոշումը բողոքարկել կուսակցական ղեկավար մարմիններում:

3.11. Կուսակցության անդամին կարգապահական պատասխանատվության կարող են ենթարկել համայնքային, մարզային, վարչական շրջանի, Երևան քաղաքի կազմակերպությունների, կուսակցության կազմակերպչական հանձնաժողովի նիստերի ժամանակ՝ տվյալ կազմակերպությունների խորհուրդների որոշմամբ: Կուսակցության ղեկավար մարմինների անդամներին կարգապահական պատասխանատվության կարող է ենթարկել միայն նախագահությունը՝ նախագահի առաջարկով:

3.12. Խրախուսման միջոցները՝
կուսակցությունը իր անդամին կարող է պարգևատրել՝

- Շնորհակալագրով,
- Պատվոգրով,
- հուշամեդալով, հուշանվերով կամ դրամական պարգևով,
- կարգապահական տույժի հանումով:

Խրախուսման միջոցները շնորհվում են կուսակցության նախագահի և նախագահության կողմից:

4. «ՀԱՅՈՑ ԱՐԾԻՎՆԵՐ. ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

(այսուհետ՝ սկզբնական կազմակերպություն)

4.1. Կուսակցության տարածքային ստորաբաժանումներն են՝ սկզբնական կազմակերպություն, համայնքային կազմակերպություն, մարզային կազմակերպություն, վարչական շրջանի կազմակերպություն, Երևան քաղաքի կազմակերպություն: Կուսակցության կառուցվածքային հիմքը կուսակցության սկզբնական կազմակերպություններն են, որոնք Հայաստանի Հանրապետության բնակավայրերում իրականացնում են կուսակցության քաղաքականությունը: Սկզբնական կազմակերպությունը բաղկացած է կուսակցության առնվազն յոթ անդամից: Սկզբնական կազմակերպության ղեկավարը (նրա բացակայության դեպքում իր տեղակալը) ի պաշտոնե համայնքային կազմակերպության խորհրդի և վարչական շրջանի կազմակերպության խորհրդի անդամ է: Սկզբնական կազմակերպությունը ստեղծվում է Հայաստանի Հանրապետության բնակավայրի հատկանիշով: Սկզբնական կազմակերպություն կարող են ձևավորել՝

- կուսակցության նախագահությունը.
- կուսակցության կազմակերպչական հանձնաժողովը.
- կուսակցության մարզային կազմակերպության խորհուրդը.
- կուսակցության համայնքային կազմակերպության խորհուրդը.
- կուսակցության Երևան քաղաքի կազմակերպության խորհուրդը.
- կուսակցության վարչական շրջանի կազմակերպության խորհուրդը:

4.2. Յոթ և ավելի անդամ ունեցող կուսակցության սկզբնական կազմակերպությունը ընտրում է ղեկավար և տեղակալ:

4.3. Սկզբնական կազմակերպությունն իր գործունեությունն իրականացնում է նիստերի անցկացման, որոշումների ընդունման և կուսակցության ղեկավար մարմինների որոշումների կատարման միջոցով:

4.4. Սկզբնական կազմակերպության նիստը հրավիրվում է երեք ամիսը մեկ անգամ: Նիստը հրավիրում է սկզբնական կազմակերպության ղեկավարը: Նիստ կարող է հրավիրել նաև սկզբնական կազմակերպության անդամների առնվազն 1/3-ը՝ ոչ ուշ, քան երեք օր առաջ օրակարգի մասին տեղյակ պահելով սկզբնական կազմակերպության անդամներին: Սկզբնական կազմակերպության նիստն օրինական է, եթե նիստին մասնակցում է սկզբնական կազմակերպության անդամների առնվազն 1/2-ը: Որոշումներն ընդունվում են ներկաների ձայների պարզ մեծամասնությամբ՝ բաց կամ գաղտնի քվեարկությամբ: Գաղտնի քվեարկությունն անցկացվում է ներկաների առնվազն 1/2-ի պահանջով, ինչպես նաև՝ բոլոր այն դեպքերում, երբ որոշակի պաշտոնի համար առաջադրվել են մեկից ավելի թեկնածուներ: Սկզբնական կազմակերպության նիստում ընտրվում է

սկզբնական կազմակերպության ղեկավար և ղեկավարի տեղակալ՝ չորս տարի ժամկետով՝ բաց կամ գաղտնի քվեարկությամբ՝ ներկաների ձայների պարզ մեծամասնությամբ: Սկզբնական կազմակերպության ղեկավարը համակարգում և վերահսկում է սկզբնական կազմակերպության գործունեությունը, կուսակցության համագումարի և նիստերի միջև ընկած ժամանակահատվածում, հրավիրում է սկզբնական կազմակերպության հերթական և արտահերթ նիստեր, ապահովում է սկզբնական կազմակերպության բնականոն աշխատանքները՝ կուսակցության կանոնադրության և ծրագրի ու ղեկավար մարմինների որոշումներին համապատասխան: Սկզբնական կազմակերպության ղեկավարի տեղակալն իրականացնում է սկզբնական կազմակերպության ղեկավարի հանձնարարականները, փոխարինում ղեկավարին՝ վերջինիս բացակայության ժամանակ: Սկզբնական կազմակերպության ղեկավարի կամ տեղակալի լիազորությունները, սկզբնական կազմակերպության նիստի որոշմամբ, կարող են վաղաժամկետ դադարեցվել՝ սկզբնական կազմակերպության անդամների թվի կեսից ավելիի ձայներով: Սկզբնական կազմակերպության ղեկավարի պաշտոնը թափուր մնալու, ինչպես նաև՝ վերջինիս բացակայության դեպքում, նրա պարտականություններն իրականացնում է ղեկավարի տեղակալը կամ տարիքով ավագ անդամը:

4.5. Սկզբնական կազմակերպությունը հաշվետու է կուսակցության համայնքային, մարզային, վարչական շրջանի, Երևան քաղաքի կազմակերպությունների խորհուրդներին, ինչպես նաև՝ կուսակցության կազմակերպչական հանձնաժողովին: Սկզբնական կազմակերպության տարեկան գործունեության մասին հաշվետվությունը ներկայացնում է սկզբնական կազմակերպության ղեկավարը՝ յուրաքանչյուր հաջորդող տարվա փետրվար ամսին: Կուսակցության հերթական կամ արտահերթ համագումարից ոչ ուշ, քան 30 օր առաջ, սկզբնական կազմակերպությունը գումարում է հաշվետու ընտրական նիստ և կատարում է սկզբնական կազմակերպության ղեկավարի և տեղակալի ընտրություն:

4.6. Սկզբնական կազմակերպությունն իր դրամական միջոցները (անդամավճարներ, նվիրատվություն) փոխանցում է կուսակցության համայնքային կազմակերպության խորհրդին, վարչական շրջանի կազմակերպության խորհրդին, իսկ դրա բացակայության դեպքում՝ մարզային կազմակերպության խորհրդին, Երևան քաղաքի կազմակերպության խորհրդին, կուսակցության կազմակերպչական հանձնաժողովին: Սկզբնական կազմակերպությունը կուսակցության կողմից հատկացված դրամական միջոցների ծախսերի մասին հաշվետվությունը ներկայացնում է համայնքային կազմակերպության խորհրդին, վարչական շրջանի կազմակերպության խորհրդին, իսկ դրա բացակայության դեպքում՝ մարզային կազմակերպության խորհրդին, Երևան քաղաքի կազմակերպության խորհրդին:

4.7. Այն սկզբնական կազմակերպությունը, որի ղեկավարը կամ տեղակալը ընտրվում է համայնքային կազմակերպության խորհրդի ղեկավար կամ տեղակալ, վարչական շրջանի կազմակերպության խորհրդի ղեկավար կամ տեղակալ, իսկ դրանց բացակայության դեպքում՝ մարզային կազմակերպության խորհրդի ղեկավար կամ տեղակալ, Երևան քաղաքի կազմակերպության խորհրդի ղեկավար կամ տեղակալ, ընտրում է նոր ղեկավար կամ տեղակալ:

5. «ՀԱՅՈՑ ԱՐԾԻՎՆԵՐ. ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ և ՄԱՐԶԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(այսուհետ՝ համայնքային կազմակերպություն, մարզային կազմակերպություն)

5.1. Հայաստանի Հանրապետության մարզերում ստեղծվում են կուսակցության համայնքային կազմակերպություններ, որոնց գործունեության տիրույթը սահմանում է կուսակցության նախագահը: Կուսակցության համայնքային կազմակերպության խորհուրդը համայնքային կազմակերպության ղեկավար մարմինն է, որը · կազմավորվում է կուսակցության համայնքային կազմակերպության՝ առնվազն երեք սկզբնական կազմակերպությունների ղեկավարներից: Համայնքային կազմակերպության խորհուրդը ընտրում է համայնքային կազմակերպության ղեկավար և տեղակալներ: Ղեկավարը համակարգում և վերահսկում է համայնքային կազմակերպության ընդհանուր գործունեությունը, հաստատում է համայնքային կազմակերպության տարեկան հաշվետվությունները և աշխատանքային ծրագրերը, իրականացնում է իր աշխատանքային ծրագրով նախատեսված միջոցառումներն ու աշխատանքները, որոշում է ղեկավար մարմինների կողմից կազմակերպված միջոցառումներին մասնակցության կարգը, ապահովում է կապը այլ համայնքային, մարզային, վարչական շրջանի, Երևան քաղաքի կազմակերպությունների հետ:

5.2. Կուսակցության համայնքային կազմակերպության ղեկավարը և նրա տեղակալները ընտրվում են կուսակցության համայնքային կազմակերպության խորհրդի անդամների կողմից՝ չորս տարի ժամկետով՝ բաց կամ գաղտնի քվեարկությամբ՝ ներկաների ձայների պարզ մեծամասնությամբ: Համայնքային կազմակերպության ղեկավարը համակարգում է համայնքային կազմակերպության գործունեությունը, կուսակցության համագումարի, նիստերի միջև ընկած ժամանակահատվածում, հրավիրում է համայնքային կազմակերպության խորհրդի հերթական և արտահերթ նիստեր, ապահովում է համայնքային կազմակերպության բնականոն աշխատանքները՝ կուսակցության կանոնադրության և ծրագրի ու ղեկավար մարմինների որոշումներին համապատասխան: Համայնքային կազմակերպության ղեկավարի տեղակալներն իրականացնում են համայնքային կազմակերպության ղեկավարի հանձնարարականները: Նրանցից մեկը ղեկավարի հանձնարարականի հիման վրա փոխարինում է ղեկավարին՝ վերջինիս բացակայության ժամանակ: Համայնքային կազմակերպության խորհրդի որոշմամբ՝ կարող է կատարվել համայնքային կազմակերպության ղեկավարի և (կամ) տեղակալների վաղաժամկետ ընտրություն: Համայնքային կազմակերպության ղեկավարի պաշտոնը թափուր մնալու, ինչպես նաև՝ վերջինիս բացակայության դեպքում, նրա պարտականություններն իրականացնում է տեղակալներից մեկը՝ համայնքային կազմակերպության խորհրդի անդամների քվեարկության պարզ մեծամասնության արդյունքում: Կուսակցության հերթական կամ արտահերթ համագումարից ոչ ուշ, քան 30 օր առաջ, կատարվում է համայնքային կազմակերպության ղեկավարի և նրա տեղակալների ընտրություն:

5.3. Կուսակցության համայնքային կազմակերպությունն իր գործունեությունն իրականացնում է համայնքային կազմակերպության խորհրդի նիստերի անցկացման, որոշումների ընդունման և կուսակցության ղեկավար մարմինների որոշումների կատարման միջոցով:

5.4. Կուսակցության համայնքային կազմակերպության խորհրդի նիստերը հրավիրվում են ոչ պակաս, քան երեք ամիսը մեկ անգամ: Նիստերը հրավիրում

է համայնքային կազմակերպության ղեկավարը: Նիստ կարող է հրավիրել նաև համայնքային կազմակերպության խորհրդի անդամների առնվազն 1/3-ը՝ ոչ ուշ, քան երեք օր առաջ օրակարգի մասին տեղյակ պահելով խորհրդի անդամներին: Նիստն օրինական է, եթե մասնակցում է խորհրդի անդամների առնվազն 1/2-ը: Որոշումներն ընդունվում են ներկաների ձայների պարզ մեծամասնությամբ՝ բաց կամ գաղտնի քվեարկությամբ: Գաղտնի քվեարկությունն անցկացվում է ներկաների առնվազն 1/3-ի պահանջով, ինչպես նաև՝ բոլոր այն դեպքերում, երբ որոշակի պաշտոնի համար առաջադրվել են մեկից ավելի թեկնածուներ:

5.5. Կուսակցության համայնքային կազմակերպության խորհուրդն իր գործունեության մասին հաշվետու է մարզային կազմակերպության խորհրդին: Տարեկան գործունեության մասին հաշվետվությունը ներկայացվում է կուսակցության համայնքային կազմակերպության ղեկավարի կողմից՝ յուրաքանչյուր հաջորդող տարվա փետրվար ամսվա մեջ:

5.6. Կուսակցության համայնքային կազմակերպության խորհուրդն իր դրամական միջոցները փոխանցում է մարզային կազմակերպության խորհրդին կամ կուսակցության կազմակերպչական հանձնաժողովին: Կուսակցության համայնքային կազմակերպության խորհուրդը կուսակցության կողմից հատկացված դրամական միջոցների ծախսերի մասին հաշվետվությունը յուրաքանչյուր կիսամյակը մեկ ներկայացնում է մարզային կազմակերպության խորհրդին:

5.7. Կուսակցության համայնքային կազմակերպության խորհուրդն իրավունք ունի իր վարչատարածքում գործող սկզբնական կազմակերպության լուծարելու հարցը բարձրացնել կուսակցության մարզային կազմակերպության խորհրդի առջև:

5.8. Այն համայնքային կազմակերպությունը, որի ղեկավարը կամ տեղակալներից որևէ մեկը ընտրվում է մարզային կազմակերպության ղեկավար կամ տեղակալ, ընտրում է նոր ղեկավար կամ տեղակալ:

5.9. Հայաստանի Հանրապետության մարզերում ստեղծվում են կուսակցության մարզային կազմակերպություններ: Մարզային կազմակերպության խորհուրդը կուսակցության մարզային կազմակերպության ղեկավար մարմինն է, որը կազմավորվում է մարզի վարչատարածքում գործող նվազագույնը երեք և ավելի համայնքային կազմակերպությունների ղեկավարներից և նրանց տեղակալներից: Մարզային կազմակերպության խորհուրդը ընտրում է մարզային կազմակերպության ղեկավար և տեղակալներ: Ղեկավարը համակարգում և վերահսկում է մարզային կազմակերպության ընդհանուր գործունեությունը, հաստատում է մարզային կազմակերպության տարեկան հաշվետվությունները և աշխատանքային ծրագրերը, իրականացնում է իր՝ աշխատանքային ծրագրով նախատեսված միջոցառումներն ու աշխատանքները, որոշում է ղեկավար մարմինների կողմից կազմակերպված միջոցառումներին մասնակցության կարգը, ապահովում է կապը այլ համայնքային, մարզային, վարչական շրջանի, Երևան քաղաքի կազմակերպությունների հետ:

5.10. Կուսակցության մարզային կազմակերպության ղեկավարը և նրա երկու տեղակալներն ընտրվում են կուսակցության մարզային կազմակերպության խորհրդի անդամների կողմից՝ չորս տարի ժամկետով՝ բաց կամ գաղտնի քվեարկությամբ՝ ներկաների ձայների պարզ մեծամասնությամբ: Մարզային կազմակերպության ղեկավարը համակարգում է մարզային կազմակերպության գործունեությունը, համագումարի, նիստերի միջև ընկած ժամանակահատվածում, հրավիրում է մարզային կազմակերպության խորհրդի հերթական և արտահերթ նիստեր, ապահովում է մարզային կազմակերպության բնականոն աշխատանքները՝ կուսակցության կանոնադրության և ծրագրի ու ղեկավար մարմինների

որոշումներին համապատասխան: Մարզային կազմակերպության ղեկավարի տեղակալներն իրականացնում են մարզային կազմակերպության ղեկավարի հանձնարարականները: Տեղակալներից մեկը, ղեկավարի հանձնարարականի հիման վրա, փոխարինում է ղեկավարին՝ վերջինիս բացակայության ժամանակ: Մարզային կազմակերպության խորհրդի որոշմամբ կարող է կատարվել մարզային կազմակերպության ղեկավարի և (կամ) տեղակալների վաղաժամկետ ընտրություն: Մարզային կազմակերպության ղեկավարի պաշտոնը թափուր մնալու, ինչպես նաև՝ վերջինիս բացակայության դեպքում, նրա պարտականություններն իրականացնում է ղեկավարի՝ տարիքով ավագ տեղակալը: Կուսակցության հերթական կամ արտահերթ համագումարից ոչ ուշ, քան 20 օր առաջ, մարզային կազմակերպության խորհուրդը կատարում է մարզային կազմակերպության ղեկավարի և տեղակալների ընտրություն:

5.11. Կուսակցության մարզային կազմակերպությունն իր գործունեությունն իրականացնում է մարզային կազմակերպության խորհրդի նիստերի անցկացման, որոշումների ընդունման և կուսակցության ղեկավար մարմինների որոշումների կատարման միջոցով:

5.12. Կուսակցության մարզային կազմակերպության խորհրդի նիստերը հրավիրվում են ոչ պակաս, քան երեք ամիսը մեկ անգամ: Նիստերը հրավիրում է մարզային կազմակերպության ղեկավարը: Նիստ կարող է հրավիրել նաև մարզային կազմակերպության խորհրդի անդամների առնվազն 1/3-ը՝ ոչ ուշ, քան երեք օր առաջ օրակարգի մասին տեղյակ պահելով մարզային կազմակերպության խորհրդի անդամներին: Նիստն օրինական է, եթե մասնակցում է մարզային կազմակերպության խորհրդի անդամների առնվազն 1/2-ը: Մարզային կազմակերպության խորհրդի որոշումներն ընդունվում են ներկաների ձայների պարզ մեծամասնությամբ՝ բաց կամ գաղտնի քվեարկությամբ: Գաղտնի քվեարկությունն անցկացվում է ներկաների առնվազն 1/3-ի պահանջով, ինչպես նաև՝ բոլոր այն դեպքերում, երբ որոշակի պաշտոնի համար առաջադրվել են մեկից ավելի թեկնածուներ:

5.13. Կուսակցության մարզային կազմակերպության խորհուրդն իր գործունեության մասին հաշվետու է կուսակցության նախագահությանը: Տարեկան գործունեության մասին հաշվետվությունը ներկայացվում է մարզային կազմակերպության ղեկավարի կողմից՝ յուրաքանչյուր հաջորդող տարվա մարտ ամսվա ընթացքում:

5.14. Կուսակցության մարզային կազմակերպության խորհուրդը համակարգում և վերահսկում է կուսակցության համայնքային կազմակերպությունների աշխատանքները: Կուսակցության մարզային կազմակերպության խորհուրդը կարող է կազմալուծել իր վարչատարածքում գործող կուսակցության սկզբնական կազմակերպությանը՝ իր նախաձեռնությամբ կամ կուսակցության համայնքային կազմակերպության խորհրդի առաջարկով: Կուսակցության մարզային կազմակերպության խորհուրդը իր վարչատարածքում գործող կուսակցության համայնքային կազմակերպության կազմալուծման հարցը կարող է ներկայացնել կուսակցության նախագահությանը:

5.15. Կուսակցության մարզային կազմակերպության խորհուրդն իր դրամական միջոցները փոխանցում է կուսակցության դրամարկղ: Մարզային կազմակերպության խորհուրդը կուսակցության կողմից հատկացված դրամական միջոցների ծախսերի մասին հաշվետվությունը տարեկան մեկ անգամ ներկայացնում է կուսակցության նախագահությանը:

6. «ՀԱՅՈՑ ԱՐԾԻՎՆԵՐ. ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(այսուհետ՝ Երևան քաղաքի կազմակերպություն,
վարչական շրջանի կազմակերպություն)

6.1. Երևան քաղաքում ստեղծվում են կուսակցության սկզբնական կազմակերպություններ, վարչական շրջանի կազմակերպություններ, Երևան քաղաքի կազմակերպություն:

6.2. Կուսակցության վարչական շրջանի կազմակերպության խորհուրդը վարչական շրջանի կազմակերպության ղեկավար մարմինն է, որը կազմավորվում է կուսակցության վարչական շրջանի կազմակերպության առնվազն երեք սկզբնական կազմակերպությունների ղեկավարներից:

6.3. Կուսակցության վարչական շրջանի կազմակերպության ղեկավարը և նրա տեղակալները ընտրվում են կուսակցության վարչական շրջանի կազմակերպության խորհրդի անդամների կողմից՝ չորս տարի ժամկետով՝ բաց կամ գաղտնի քվեարկությամբ՝ ներկաների ձայների պարզ մեծամասնությամբ: Վարչական շրջանի կազմակերպության ղեկավարը համակարգում և վերահսկում է վարչական շրջանի կազմակերպության գործունեությունը համագումարի, նիստերի միջև ընկած ժամանակահատվածում, հրավիրում է վարչական շրջանի կազմակերպության խորհրդի հերթական և արտահերթ նիստեր, ապահովում է վարչական շրջանի կազմակերպության բնականոն աշխատանքները՝ կուսակցության կանոնադրության և ծրագրի ու ղեկավար մարմինների որոշումներին համապատասխան: Վարչական շրջանի կազմակերպության ղեկավարի տեղակալներն իրականացնում են վարչական շրջանի կազմակերպության ղեկավարի հանձնարարականները: Նրանցից մեկը, ղեկավարի հանձնարարականի հիման վրա, փոխարինում է ղեկավարին՝ վերջինիս բացակայության ժամանակ: Վարչական շրջանի կազմակերպության խորհրդի որոշմամբ՝ կարող է կատարվել վարչական շրջանի կազմակերպության ղեկավարի և (կամ) տեղակալների վաղաժամկետ ընտրություն: Վարչական շրջանի կազմակերպության ղեկավարի պաշտոնը թափուր մնալու, ինչպես նաև՝ վերջինիս բացակայության դեպքում, նրա պարտականություններն իրականացնում է ղեկավարի տեղակալներից մեկը՝ վարչական շրջանի կազմակերպության խորհրդի անդամների քվեարկության պարզ մեծամասնության արդյունքում: Կուսակցության հերթական կամ արտահերթ համագումարից ոչ ուշ, քան 30 օր առաջ կատարվում է վարչական շրջանի կազմակերպության ղեկավարի և նրա տեղակալների ընտրություն:

6.4. Կուսակցության վարչական շրջանի կազմակերպությունն իր գործունեությունն իրականացնում է վարչական շրջանի կազմակերպության խորհրդի նիստերի անցկացման, որոշումների ընդունման և կուսակցության ղեկավար մարմինների որոշումների կատարման միջոցով:

6.5. Կուսակցության վարչական շրջանի կազմակերպության խորհրդի նիստերը հրավիրվում են ոչ պակաս, քան երեք ամիսը մեկ անգամ: Նիստերը հրավիրում է վարչական շրջանի կազմակերպության ղեկավարը: Նիստ կարող է հրավիրել նաև վարչական շրջանի կազմակերպության խորհրդի անդամների առնվազն 1/3-ը՝ ոչ ուշ, քան երեք օր առաջ օրակարգի մասին տեղյակ պահելով խորհրդի անդամներին: Նիստն օրինական է, եթե մասնակցում է խորհրդի անդամների առնվազն 1/2-ը: Որոշումներն ընդունվում են ներկաների ձայների պարզ մեծամասնությամբ՝ բաց

կամ գաղտնի քվեարկությամբ: Գաղտնի քվեարկությունն անցկացվում է ներկաների առնվազն 1/3-ի պահանջով, ինչպես նաև՝ բոլոր այն դեպքերում, երբ որոշակի պաշտոնի համար առաջադրվել են մեկից ավելի թեկնածուներ:

6.6. Կուսակցության վարչական շրջանի կազմակերպության խորհուրդն իր գործունեության մասին հաշվետու է Երևան քաղաքի կազմակերպության խորհրդին: Տարեկան գործունեության մասին հաշվետվությունը ներկայացվում է կուսակցության վարչական շրջանի կազմակերպության ղեկավարի կողմից՝ յուրաքանչյուր հաջորդող տարվա փետրվար ամսվա մեջ:

6.7. Կուսակցության վարչական շրջանի կազմակերպության խորհուրդն իր դրամական միջոցները փոխանցում է Երևան քաղաքի կազմակերպության խորհրդին կամ կուսակցության կազմակերպչական հանձնաժողովին: Կուսակցության վարչական շրջանի կազմակերպության խորհուրդը, կուսակցության կողմից հատկացված, դրամական միջոցների ծախսերի մասին հաշվետվությունը յուրաքանչյուր կիսամյակը մեկ ներկայացնում է Երևան քաղաքի կազմակերպության խորհրդին:

6.8. Կուսակցության վարչական շրջանի կազմակերպության խորհուրդն իրավունք ունի, իր վարչական շրջանում գործող, կուսակցության սկզբնական կազմակերպության լուծարելու հարցը բարձրացնել կուսակցության Երևան քաղաքի կազմակերպության խորհրդի առջև:

6.9. Այն վարչական շրջանի կազմակերպությունը, որի ղեկավարը կամ տեղակալներից որևէ մեկը ընտրվում է Երևան քաղաքի կազմակերպության ղեկավար կամ տեղակալ, ընտրում է նոր ղեկավար կամ տեղակալ:

6.10. Երևան քաղաքում ստեղծվում է կուսակցության Երևան քաղաքի կազմակերպություն: Երևան քաղաքի կազմակերպության խորհուրդը կուսակցության Երևան քաղաքի կազմակերպության ղեկավար մարմինն է, որը կազմավորվում է Երևան քաղաքի վարչական շրջաններում գործող նվազագույնը երեք վարչական շրջանների կազմակերպությունների ղեկավարներից և նրանց տեղակալներից: Երևան քաղաքի կազմակերպության խորհուրդը ընտրում է Երևան քաղաքի կազմակերպության ղեկավար և տեղակալներ: Ղեկավարը համակարգում և վերահսկում է Երևան քաղաքի կազմակերպության ընդհանուր գործունեությունը, հաստատում է Երևան քաղաքի կազմակերպության տարեկան հաշվետվությունները և աշխատանքային ծրագրերը, իրականացնում է իր աշխատանքային ծրագրով նախատեսված միջոցառումներն ու աշխատանքները, որոշում է ղեկավար մարմինների կողմից կազմակերպված միջոցառումներին մասնակցության կարգը, ապահովում է կապը այլ համայնքային, մարզային, վարչական շրջանների կազմակերպությունների հետ:

6.11. Կուսակցության Երևան քաղաքի կազմակերպության ղեկավարը և նրա երկու տեղակալներն ընտրվում են կուսակցության Երևան քաղաքի կազմակերպության խորհրդի անդամների կողմից՝ չորս տարի ժամկետով՝ բաց կամ գաղտնի քվեարկությամբ՝ ներկաների ձայների պարզ մեծամասնությամբ: Երևան քաղաքի կազմակերպության ղեկավարը համակարգում է Երևան քաղաքի կազմակերպության գործունեությունը, համագումարի, նիստերի միջև ընկած ժամանակահատվածում, հրավիրում է Երևան քաղաքի կազմակերպության խորհրդի հերթական և արտահերթ նիստեր, ապահովում է Երևան քաղաքի կազմակերպության բնականոն աշխատանքները՝ կուսակցության կանոնադրության և ծրագրի ու ղեկավար մարմինների որոշումներին համապատասխան: Երևան քաղաքի կազմակերպության ղեկավարի

տեղակալներն իրականացնում են Երևան քաղաքի կազմակերպության ղեկավարի հանձնարարականները: Տեղակալներից մեկը, ղեկավարի հանձնարարականի հիման վրա, փոխարինում է ղեկավարին՝ վերջինիս բացակայության ժամանակ: Երևան քաղաքի կազմակերպության խորհրդի որոշմամբ՝ կարող է կատարվել Երևան քաղաքի կազմակերպության ղեկավարի և տեղակալների վաղաժամկետ ընտրություն: Երևան քաղաքի կազմակերպության ղեկավարի պաշտոնը թափուր մնալու, ինչպես նաև՝ վերջինիս բացակայության դեպքում, նրա պարտականություններն իրականացնում է ղեկավարի՝ տարիքով ավագ տեղակալը: Կուսակցության հերթական կամ արտահերթ համագումարից ոչ ուշ, քան 10 օր առաջ, Երևան քաղաքի կազմակերպության խորհուրդը կատարում է Երևան քաղաքի կազմակերպության ղեկավարի և տեղակալների ընտրություն:

6.12. Կուսակցության Երևան քաղաքի կազմակերպությունն իր գործունեությունն իրականացնում է Երևան քաղաքի կազմակերպության խորհրդի նիստերի անցկացման, որոշումների ընդունման և կուսակցության ղեկավար մարմինների որոշումների կատարման միջոցով:

6.13. Կուսակցության Երևան քաղաքի կազմակերպության խորհրդի նիստերը հրավիրվում են ոչ պակաս, քան երեք ամիսը մեկ անգամ: Նիստերը հրավիրում է Երևան քաղաքի կազմակերպության ղեկավարը: Նիստ կարող է հրավիրել նաև Երևան քաղաքի կազմակերպության խորհրդի անդամների առնվազն 1/3-ը՝ ոչ ուշ, քան երեք օր առաջ օրակարգի մասին տեղյակ պահելով Երևան քաղաքի կազմակերպության խորհրդի անդամներին: Նիստն օրինական է, եթե մասնակցում է Երևան քաղաքի կազմակերպության խորհրդի անդամների առնվազն 1/2-ը: Երևան քաղաքի կազմակերպության խորհրդի որոշումներն ընդունվում են ներկաների ձայների պարզ մեծամասնությամբ՝ բաց կամ գաղտնի քվեարկությամբ: Գաղտնի քվեարկությունն անցկացվում է ներկաների առնվազն 1/3-ի պահանջով, ինչպես նաև՝ բոլոր այն դեպքերում, երբ որոշակի պաշտոնի համար առաջադրվել են մեկից ավելի թեկնածուներ:

6.14. Կուսակցության Երևան քաղաքի կազմակերպության խորհուրդն իր գործունեության մասին հաշվետու է կուսակցության նախագահությանը: Տարեկան գործունեության մասին հաշվետվությունը ներկայացվում է կուսակցության Երևան քաղաքի կազմակերպության ղեկավարի կողմից՝ յուրաքանչյուր հաջորդող տարվա մարտ ամսվա ընթացքում:

6.15. Կուսակցության Երևան քաղաքի կազմակերպության խորհուրդը համակարգում և վերահսկում է կուսակցության վարչական շրջանների կազմակերպությունների աշխատանքները: Կուսակցության Երևան քաղաքի կազմակերպության խորհուրդը կարող է կազմալուծել, իր վարչական շրջանում գործող, կուսակցության սկզբնական կազմակերպությանը՝ իր նախաձեռնությամբ կամ կուսակցության վարչական շրջանի կազմակերպության խորհրդի առաջարկով: Կուսակցության Երևան քաղաքի կազմակերպության խորհուրդը կուսակցության վարչական շրջանի կազմակերպության կազմալուծման հարցը կարող է ներկայացնել կուսակցության նախագահությանը:

6.16. Կուսակցության Երևան քաղաքի կազմակերպության խորհուրդն իր դրամական միջոցները փոխանցում է կուսակցության դրամարկղ: Կուսակցության Երևան քաղաքի կազմակերպության խորհուրդը կուսակցության կողմից հատկացված դրամական միջոցների ծախսերի մասին հաշվետվությունը տարեկան մեկ անգամ ներկայացնում է կուսակցության նախագահությանը:

6.17. Կուսակցության Երևան քաղաքի կազմակերպության խորհրդի աշխատանքները համակարգում է «Հայոց Արծիվներ. Միասնական Հայաստան» կուսակցության անդամներից մեկը՝ կուսակցության նախագահի որոշմամբ:

7. «ՀԱՅՈՑ ԱՐԾԻՎՆԵՐ. ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ (այսուհետ՝ համագումար)

7.1. Կուսակցության համագումարը կուսակցության բարձրագույն մարմինն է, որի ընդունած որոշումները պարտադիր են կուսակցության բոլոր մարմինների և անդամների համար: Կուսակցության համագումարում ընտրված և կուսակցության կանոնադրությամբ սահմանված մարմինները հաշվետու են համագումարին:

7.2. Կուսակցության հերթական համագումարը հրավիրվում է չորս տարին մեկ:

7.3. Համագումարի պատվիրակներն առաջադրվում են կուսակցության սկզբնական կազմակերպությունների նիստերում: Համագումարի պատվիրակներին հաստատում են կուսակցության համայնքային, մարզային, վարչական շրջանի, Երևան քաղաքի կազմակերպությունների խորհուրդները: Համագումարն իրավազոր է, եթե ներկա են համագումարի պատվիրակների ընդհանուր թվի առնվազն կեսը, բայց ոչ պակաս, քան 100 պատվիրակ: Կուսակցության կանոնադրության ու ծրագրի ընդունման, դրանցում փոփոխություններ և լրացումներ կատարելու (բացառությամբ օրենքի փոփոխությամբ պայմանավորված փոփոխությունների և լրացումների), կուսակցության ղեկավար և վերահսկողություն իրականացնող մարմինների կազմավորման, մշտապես գործող ղեկավար մարմնի ղեկավարի՝ նախագահի, ինչպես նաև՝ կուսակցության վերակազմակերպման և լուծարման մասին որոշումները, ընդունվում են համագումարի պատվիրակների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Համագումարի որոշումները, բացառությամբ օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերի, ընդունվում են բաց կամ գաղտնի քվեարկությամբ՝ համագումարին ներկա պատվիրակների ձայների մեծամասնությամբ: Գաղտնի քվեարկությունն անցկացվում է համագումարին ներկա պատվիրակների առնվազն 1/3-ի պահանջով, ինչպես նաև՝ բոլոր այն դեպքերում, երբ որոշակի պաշտոնի համար առաջադրվել են մեկից ավելի թեկնածուներ:

7.4. Կուսակցության արտահերթ համագումար կարող է հրավիրվել կուսակցության նախագահի առաջարկությամբ կամ կուսակցության նախագահության 2/3-ի պահանջով:

7.5. Կուսակցության համագումարը՝

- լսում և հաստատում է կուսակցության նախագահի հաշվետվությունն իր և նախագահության գործունեության մասին.
- քննարկում և հաստատում է կուսակցության ծրագիրը, կանոնադրությունը և դրանցում առաջարկվող փոփոխություններն ու լրացումները, բացառությամբ «Կուսակցությունների մասին» ՀՀ Սահմանադրական օրենքի փոփոխությամբ պայմանավորված փոփոխությունների և լրացումների.
- ընտրում է կուսակցության նախագահ.
- ընտրում է կուսակցության նախագահություն.
- որոշում է կուսակցության ռազմավարական քաղաքական ուղին, կուսակցության նպատակների և խնդիրների իրագործման գործելաոճն ու իրականացման ուղղությունները.

- լսում և հաստատում է կուսակցության վերստուգիչ հանձնաժողովի հաշվետվությունը.
- որոշում է վերստուգիչ հանձնաժողովի անդամների թիվը և ընտրում կուսակցության վերստուգիչ հանձնաժողով.
- որոշում է ընդունում կուսակցության վերակազմակերպման, և կամ, լուծարման մասին:

8. «ՀԱՅՈՑ ԱՐԾԻՎՆԵՐ. ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԸ

8.1. Կուսակցության նախագահն ընտրվում է համագումարի կողմից՝ հերթական համագումարի միջև ընկած ժամանակահատվածով՝ համագումարի ընտրված պատվիրակների ձայների մեծամասնությամբ՝ չորս տարի ժամկետով: Կուսակցության նախագահի թեկնածություններն առաջադրվում են համագումարի պատվիրակների կողմից: Եթե առաջադրվել են մեկից ավելի թեկնածուներ, ապա, գաղտնի քվեարկության արդյունքում, ընտրված է համարվում համագումարի պատվիրակների առավել ձայներ ստացած թեկնածուն:

8.2. Կուսակցության նախագահի բացակայության դեպքում՝ կուսակցության նախագահի տեղակալներից մեկը, կուսակցության նախագահի հանձնարարությամբ, իրականացնում է կուսակցության նախագահի լիազորությունները:

8.3. Կուսակցության նախագահը՝
- իրականացնում է կուսակցության ընդհանուր ղեկավարումը.
- ներկայացնում է կուսակցությունը, նրա շահերը և դիրքորոշումը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական, քաղաքական և միջազգային կազմակերպությունների հետ ունեցած հարաբերություններում կամ այդ նպատակով լիազորում է կուսակցության այլ անդամների.
- հրավիրում է հերթական կամ արտահերթ համագումար.
- ի պաշտոնե կուսակցության նախագահության անդամ է.
- հրավիրում է կուսակցության նախագահության նիստ.
- հերթական համագումարի հրավիրումից մեկ ամիս առաջ հրավիրում է կուսակցության նախագահության նիստ, որտեղ որոշվում է համագումարի օրակարգի նախագիծը.
- ղեկավարում է կուսակցության աշխատանքները և նախագահում կուսակցության նախագահության նիստը.
- տնօրինում է կուսակցության գույքը և դրամական միջոցները (կառավարում և տնօրինում է կուսակցության տարածքային ստորաբաժանումների գույքը և ֆինանսական միջոցները).
- հաստատում է (ստորագրում է) կուսակցության նախագահի և նախագահության, այդ թվում նաև՝ կուսակցության պաշտոնաթերթի և այլ պարբերականների հրատարակման մասին որոշումները.
- կազմավորում է իր աշխատակազմը.
- կուսակցության անունից հաստատում (ստորագրում) է բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը.
- որոշում է կայացնում կասեցնել և (կամ) վերականգնել կուսակցության անդամի անդամակցությունը.
- կուսակցության նախագահությանն է ներկայացնում կուսակցության նախագահի տեղակալների, կուսակցության հանձնաժողովների ղեկավարների,

ինչպես նաև՝ կուսակցության կանանց և երիտասարդության հարցերի հանձնաժողովների ղեկավարների թեկնածությունները.

- սահմանում է կուսակցության նախագահի տեղակալների կողմից անմիջականորեն համակարգվող ոլորտները.
- անհրաժեշտության դեպքում՝ ստեղծում է Երևան քաղաքի, վարչական շրջանի, մարզային, համայնքային, սկզբնական կազմակերպություններ.
- անհրաժեշտության դեպքում՝ լուծարում է կուսակցության ստորաբաժանումներից մեկը կամ մի քանիսը.
- առաջարկում է նախագահությանը կարգապահական պատասխանատվության ենթարկել կուսակցության ղեկավար մարմինների անդամներին.
- առաջադրում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի, տեղական ինքնակառավարման մարմինների, ավագանու ընտրություններում կուսակցության կողմից թեկնածուներ՝ խորհրդակցելով նախագահության հետ.
- առաջադրում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում և Հայաստանի Հանրապետության կառավարությունում քաղաքական պաշտոններում նշանակվող կամ ընտրության ներկայացվող կուսակցության թեկնածուներին՝ խորհրդակցելով նախագահության հետ.
- համակարգում և հսկողություն է իրականացնում կուսակցության բոլոր տեսակի լրատվամիջոցների և հրատարակչական ծառայությունների գործունեության նկատմամբ.
- հաստատում է կուսակցության գույքի կառավարման կարգը և դրամական ծախսերի նախահաշիվը.
- իրականացնում է կուսակցության՝ որպես իրավաբանական անձի, լիազորությունները.
- սահմանում է անդամավճարի գանձման կարգը՝ խորհրդակցելով նախագահության հետ, պատվիրում է կուսակցության հուշամեդալներ, հուշանվերներ՝ կուսակցության խորհրդանշանի պատկերով և պարգևատրում՝ նախագահության հաստատված կարգով.
- հաստատում և, օրենքով սահմանված կարգով ու ժամկետում, պետական լիազոր մարմնին է ներկայացնում կուսակցության ֆինանսական հաշվետվությունները.
- յուրաքանչյուր տարի, Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում, հրապարակում է կուսակցության ֆինանսական և գույքի օգտագործման վերաբերյալ հաշվետվությունները.
- իրականացնում է, սույն կանոնադրությամբ և կուսակցության համագումարի կողմից իրեն վերապահված, այլ լիազորություններ.
- կուսակցության պաշտոնական դիրքորոշումն արտահայտում են կուսակցության նախագահը, նախագահի մամուլի քարտուղարը, նախագահի տեղակալները, ինչպես նաև, նախագահի հանձնարարությամբ, նախագահության անդամները, Ազգային ժողովում կուսակցության խմբակցության ղեկավարը:

9. «ՀԱՅՈՑ ԱՐԾԻՎՆԵՐ. ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆԸ

9.1. Կուսակցության մշտական գործող ղեկավար մարմինը կուսակցության նախագահությունն է, որն ընտրվում է կուսակցության համագումարում՝ հերթական համագումարի միջև ընկած ժամանակահատվածով՝ չորս տարի

ժամկետով: Նախագահության անդամների թիվը որոշում է համագումարը: Նախագահության անդամության թեկնածուներն առաջադրվում են համագումարի պատվիրակների կողմից:

- Նախագահության անդամների ընտրությունը կատարվում է բաց կամ գաղտնի քվեարկությամբ: Ընտրված են համարվում համագումարի պատվիրակների առավել կողմ ձայներ ստացած թեկնածուները:
- Կուսակցության նախագահությունն իր գործունեությունն իրականացնում է նախագահության նիստերի, որոշումների ընդունման և կուսակցության համագումարի որոշումների կատարման միջոցով:
- Կուսակցության նախագահության նիստերը հրավիրվում են ոչ պակաս, քան երեք ամիսը մեկ անգամ: Կուսակցության նախագահի կամ նախագահության անդամների առնվազն 1/3-ի նախաձեռնությամբ կարող է հրավիրել արտահերթ նիստ: Նիստն օրինական է, եթե ներկա է նախագահության անդամների առնվազն 2/3-ը:

9.2. Կուսակցության նախագահությունը՝

- կազմակերպում, ղեկավարում և վերահսկում է կուսակցության համագումարի որոշումների կատարման ընթացքը.
- հրավիրում է կուսակցության հերթական համագումար և նախապատրաստում դրա անցկացումը.
- որոշում է համագումարի գումարման օրը, պատվիրակների ընտրության կարգը, ընդհանուր թիվը.
- «Կուսակցությունների մասին» ՀՀ Սահմանադրական օրենքի փոփոխությամբ պայմանավորված՝ փոփոխություններ և լրացումներ է կատարում կանոնադրությունում և ծրագրում.
- որոշում է կայացնում համագումարի օրակարգի նախագիծը հաստատելու մասին.
- հրավիրում է կուսակցության արտահերթ համագումար՝ կուսակցության նախագահի առաջարկությամբ կամ նախագահության անդամների 2/3-ի պահանջով.
- մշակում է կուսակցության գաղափարախոսական հիմնադրույթները, կանոնադրական, ծրագրային և կուսակցության ռազմավարությանն առնչվող փաստաթղթերի նախագծերը, ինչպես նաև՝ կուսակցության մարտավարական սկզբունքները, քննարկում է կուսակցության նախընտրական ծրագիրը և ներկայացնում նախագահության հաստատման.
- քննարկում և լուծում է կուսակցության ընթացիկ գործունեությանն առնչվող խնդիրները.
- վերահսկում է կուսակցության Երևան քաղաքի, վարչական շրջանների, մարզային, համայնքային, սկզբնական կազմակերպությունների, հանձնաժողովների և ոլորտային ստորաբաժանումների աշխատանքները.
- կուսակցության նախագահի առաջարկով՝ կարգապահական պատասխանատվության կարող է ենթարկել կուսակցության ղեկավար մարմինների անդամներին.
- առանձին դեպքերում՝ որոշում է կայացնում օրենսդրական նախաձեռնությունների, քաղաքական որոշումների վերաբերյալ՝ Ազգային ժողովում գործող կուսակցության խմբակցության դիրքորոշման մասին.
- հաշվի առնելով կուսակցության անդամների, ինչպես նաև՝ մարզային, համայնքային կազմակերպությունների կողմից ներկայացրած առաջարկությունները, կուսակցության նախագահի առաջարկով, որոշում է

ընդունում Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքների ավագանիների ընտրություններին միայնակ կամ դաշինքով մասնակցելու, ինչպես նաև ընտրական ցուցակների կարգը հաստատելու մասին.

- որոշում է կայացնում Երևան քաղաքի, վարչական շրջանի, մարզային, համայնքային կամ սկզբնական կազմակերպությունների արտահերթ նիստեր հրավիրելու և նիստերում պարտադիր քննարկման ենթակա հարցերի մասին.
- կուսակցության նախագահի առաջարկությամբ՝ համաձայնություն է տալիս կուսակցության Երևան քաղաքի կազմակերպության աշխատանքները համակարգողի թեկնածությանը.
- անհրաժեշտության կամ բողոքարկման դեպքերում՝ կարող է վերանայել կուսակցության մարմինների որոշումները.
- լսում է կուսակցության մարզային կազմակերպությունների խորհուրդների, Երևան քաղաքի կազմակերպության խորհրդի տարեկան հաշվետվությունները.
- կուսկացության անունից կնքում է քաղաքացիաիրավական գործարքներ.
- հաստատում է կուսակցության տարեկան բյուջեն, և հաստատված բյուջեի հիման վրա հաստատում է կուսակցության ծախսերի նախահաշիվները.
- որոշում է կայացնում կուսակցության գործունեության բոլոր այն հարցերի շուրջ, որոնք կանոնադրությամբ վերապահված չեն կուսակցության համագումարի կամ նախագահի բացառիկ իրավասությանը.
- որոշում է պատվիրել հուշանվերներ՝ կուսակցության խորհրդանշանի պատկերով, ինչպես նաև՝ սահմանում կուսակցության հուշամեդալներ և դրանց տրման կարգը.
- հաշվետու է համագումարին.
- որոշում է կայացնում կուսակցության լուծարման մասին, եթե համագումարը իրավազոր չի եղել:

10. «ՀԱՅՈՑ ԱՐԾԻՎՆԵՐ. ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ (այսուհետ՝ վերստուգիչ հանձնաժողով)

10.1. Կուսակցության գործունեության վերահսկման նպատակով, համագումարի կողմից հերթական համագումարի միջև ընկած ժամանակահատվածով, ընտրվում է վերստուգիչ հանձնաժողով՝ չորս տարի ժամկետով:

10.2. Վերստուգիչ հանձնաժողովի անդամը չի կարող միաժամանակ լինել կուսակցության նախագահության անդամ, կուսակցության նախագահի աշխատակազմի անդամ, կուսակցության Երևան քաղաքի, վարչական շրջանի, մարզային, համայնքային, սկզբնական կազմակերպությունների ղեկավար կամ տեղակալ, հանձնաժողովների ղեկավար ու ոլորտային ստորաբաժանումների ղեկավար:

10.3. Վերստուգիչ հանձնաժողովի անդամներն իրենց կազմից ընտրում են հանձնաժողովի նախագահ:

10.4. Վերստուգիչ հանձնաժողովը հաշվետու է կուսակցության համագումարին:

10.5. Վերստուգիչ հանձնաժողովը՝

- Վերահսկողություն է իրականացնում կուսակցության բոլոր ստորաբաժանումների, հանձնաժողովների և այլ ոլորտների ընդհանուր և ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ (կուսակցության ստորաբաժանումներում, հանձնաժողովներում և այլ ոլորտներում առանձին վերահսկողություն իրականացնող մարմիններ չեն ձևավորվում):

- Վերահսկում է կուսակցության դրամական միջոցների ձևավորման և ծախսման գործընթացները:
- Ստուգում է կուսակցության գույքի հետ կապված գործընթացները:
- Վերահսկում է կուսակցության գույքի տնօրինման, տիրապետման և օգտագործման գործընթացները:
- Ստուգում է դրամական միջոցների մուտքերի և ելքերի օրինականությունը:

11. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ «ՀԱՅՈՑ ԱՐԾԻՎՆԵՐ. ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ (այսուհետ՝ կուսակցության խմբակցություն)

11.1. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում կուսակցության անդամ պատգամավորները գործում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կանոնակարգ», Հայաստանի Հանրապետության օրենքի և խմբակցության կանոնակարգին համաձայն:

11.2. Կուսակցության խմբակցությունը նպաստում է Ազգային ժողովի օրինաստեղծ աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելուն: Ազգային ժողովում ներկայացնում է իր կուսակցության ծրագրային խնդիրները և պաշտպանում դրանք:

11.3. Կուսակցության խմբակցությունը սերտորեն համագործակցում է կուսակցության հետ, ստանում նրա աջակցությունը:

12. «ՀԱՅՈՑ ԱՐԾԻՎՆԵՐ. ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

12.1. Կուսակցության սեփականությունը (այդ թվում՝ ծրագրային և կանոնադրական խնդիրների իրականացման համար անհրաժեշտ շինություններ, փոխադրական միջոցներ և այլ գույք) գոյանում է՝ նվիրատվությունից, սահմանված կարգով իրականացված գործունեությունից և օրենքով չարգելված այլ աղբյուրներից:

12.2. Կուսակցության կողմից ստացված, ինչպես նաև՝ նրա սեփական միջոցների հաշվին ստեղծված, և կամ, ձեռք բերված, գույքի սեփականատերը կուսակցությունն է:

12.3. Կուսակցության բոլոր ստորաբաժանումները, հանձնաժողովները և այլ ոլորտները կուսակցության գույքը տիրապետում և օգտագործում են կուսակցության նախագահի կողմից նախատեսված սահմաններում ու կարգով:

12.4. Դրամական միջոցները ձևավորվում են անդամավճարներից, օրենքով նախատեսված նվիրատվություններից, օրենքով նախատեսված բյուջետային ֆինանսավորումից և օրենսդրությամբ չարգելված այլ մուտքերից:

12.5. Կուսակցության գույքը և դրամական միջոցները տնօրինում է կուսակցության նախագահը, կամ, նրա կողմից լիազորվելու դեպքում, կարող է տնօրինել կուսակցության նախագահության անդամներից մեկը՝ ըստ կուսակցության նախագահի կողմից հաստատված նախահաշվի և կարգի:

13. «ՀԱՅՈՑ ԱՐԾԻՎՆԵՐ. ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԼՈՒԾԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

13.1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով՝ Կուսակցության վերակազմակերպումը կարող է կատարվել կուսակցության համագումարի որոշմամբ: Կուսակցությունը կարող

է վերակազմակերպվել (միաձուլվել, միանալ, բաժանվել, առանձնանալ) միանալ այլ կուսակցության:

13.2. Կուսակցության վերակազմակերպման դեպքում՝ նրա իրավունքներն ու պարտականությունները բաշխվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքին համապատասխան:

13.3. Կուսակցության վերակազմակերպման նախաձեռնությամբ կարող են հանդես գալ կուսակցության նախագահը, կուսակցության նախագահության առնվազն կեսը կամ կուսակցության համագումարի պատվիրակների առնվազն 1/3-ը՝ գրավոր պահանջով:

13.4. Կուսակցության վերակազմակերպման մասին որոշումն ընդունվում է կուսակցության համագումարի պատվիրակների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ՝ բաց քվեարկությամբ:

13.5. Կուսակցությունը լուծարվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով և օրենքով սահմանված կարգով: Կուսակցության լուծարման դեպքում, պարտատերերի պահանջները բավարարելուց հետո, կուսակցության գույքը տնօրինվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Կուսակցության, դատական կարգով լուծարումից հետո, մնացած գույքը փոխանցվում է Հայաստանի Հանրապետությանը:

13.6. Կուսակցության գործունեությունը Սահմանադրական դատարանի որոշմամբ արգելվելու դեպքում՝ կուսակցության նկատմամբ սկսվում է լուծարման գործընթաց: Այդ դեպքում լուծարային հանձնաժողովի իրավասություններն իրականացնում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայության կողմից ստեղծված հանձնաժողովը և լուծարումից հետո կուսակցության մնացած գույքը փոխանցվում է Հայաստանի Հանրապետությանը՝ օրենքով սահմանված կարգով:

13.7. Կուսակցությունը կարող է դադարեցնել իր գործունեությունը լուծարման միջոցով՝ համագումարի որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով:

է վերակազմակերպվել (միաձուլվել, միանալ, բաժանվել, առանձնանալ) միանալ այլ կուսակցության:

13.2. Կուսակցության վերակազմակերպման դեպքում՝ նրա իրավունքներն ու պարտականությունները բաշխվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքին համապատասխան:

13.3. Կուսակցության վերակազմակերպման նախաձեռնությամբ կարող են հանդես գալ կուսակցության նախագահը, կուսակցության նախագահության առնվազն կեսը կամ կուսակցության համագումարի պատվիրակների առնվազն 1/3-ը՝ գրավոր պահանջով:

13.4. Կուսակցության վերակազմակերպման մասին որոշումն ընդունվում է կուսակցության համագումարի պատվիրակների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ՝ բաց քվեարկությամբ:

13.5. Կուսակցությունը լուծարվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով և օրենքով սահմանված կարգով: Կուսակցության լուծարման դեպքում, պարտատերերի պահանջները բավարարելուց հետո, կուսակցության գույքը տնօրինվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Կուսակցության, դատական կարգով լուծարումից հետո, մնացած գույքը փոխանցվում է Հայաստանի Հանրապետությանը:

13.6. Կուսակցության գործունեությունը Սահմանադրական դատարանի որոշմամբ արգելվելու դեպքում՝ կուսակցության նկատմամբ սկսվում է լուծարման գործընթաց: Այդ դեպքում լուծարային հանձնաժողովի իրավասություններն իրականացնում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայության կողմից ստեղծված հանձնաժողովը և լուծարումից հետո կուսակցության մնացած գույքը փոխանցվում է Հայաստանի Հանրապետությանը՝ օրենքով սահմանված կարգով:

13.7. Կուսակցությունը կարող է դադարեցնել իր գործունեությունը լուծարման միջոցով՝ համագումարի որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով:

«ՀԱՅՈՑ ԱՐԾԻՎՆԵՐ. ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ»
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՆՇԱՆԸ (ՀԱՎԵԼՎԱԾ 1.1)

Սույն կանոնադրությունը հաստատված է
2018 թվականի հունիսի 23-ին և բաղկացած է
23 (քսաներեք) էջից: